# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Արաքսիա Սվաջյան

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Շվեդիայի Թագավորություն (ք.Ստոկհոլմ), 2026 թվականի փետրվարի 2-5-ը

3. **Հրավիրող կողմը**

Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալություն (Sida) ՍԱԼԱՐ Ինթերնեշընլ կազմակերպության Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիա (SALAR)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցել «Ֆիսկալ և կրթական ապակենտրոնացում և տեղական ինքնակառավարման բարեփոխումներ» ծրագրի շրջանակում կազմակերպված ուսումնական այցին, ծանոթանալ Շվեդիայի կրթության կառավարման փորձին, մասնավորապես՝ դպրոցների կառավարման ապակենտրոնացված մոդելին, ինչպես նաև ուսումնասիրել կրթության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարումը և կրթության որակի վերահսկողության իրականացման մեխանիզմները:

5. **Քննարկված թեմաները**

Ուսումնական այցի ընթացքում ներկայացվել է Շվեդիայի ապակենտրոնացման պատմությունը և ներկայումս գործող համակարգը, ըստ որի բոլոր մանկապարտեզները և դպրոցները գտնվում են համայնքների ենթակայությամբ և ֆինանսավորվում են գերազանցապես համայնքների կողմից: Այցեր են կազմակերպվել տարբեր համայնքներ, որոնց շրջանակներում հանդիպումներ և քննարկում են եղել համայնքների ղեկավարների, պատասխանատուների, ուսումնական հաստատությունների ղեկավարների հետ: Քննարկում է կազմակերպվել նաև ֆինանսների նախարարության պատասխանատուների հետ, ներկայացվեց ֆիսկալ ապակենտրոնացման և համահարթեցման գործող մեխանիզմը: Այց է կազմակերպվել Ստոկհոլմի քաղաքապետարան, հանդիպում

ղեկավար կազմի հետ, ապակենտրոնացված հարկային քաղաքականության և ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման հարցերի շուրջ:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի շրջանակում կազմակերպվել են հանդիպումներ Սալարի, Շվեդիայի արտաքին գործերի նախարարի տեղակալի, Ստոկհոլմի քաղաքապետի ֆինանսների նախարարության պատասխանատուների, համայնքների ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկել ենք ապակենտրոնացման քաղաքականությունը, Շվեդիայում գործող համակարգը, ֆիսկալ ապակենտրոնացման հարցերը, ուսումնական հաստատությունների ապակենտրոնացված կառավարման մոդելը:

**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Այցի և հանդիպումների ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել Հայաստանի հանրապետությունում իրականացվող ապակենտրոնացման գործընթացներում աջակցության ցուցաբերման, նորակառույց 3 կրթահամալիրների կառավարման հարցում համայնքների կարողությունների զարգացման և նրանց ներգրավման հարցերի շուրջ:

**7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Գործուղման ժամանակահատվածում եղել է պայմանավորվածություն փորձնական ծրագրի իրականացնել 3 նորակառույց կրթահամալիրներում՝ Սալարի աջակցությամբ աշխատելով համայնքների կարողությունների զարգացման, նրանց ակտիվ ընդգրկման ուղղությամբ: Շարունակել աշխատանքները դպրոցների կառավարման գործառույթների քարտեզագրման ուղղությամբ: Ակնկալվում է, որ նշված քայլերը կնպաստեն կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանը, հաշվետվողականության և հանրային վերահսկողության մեխանիզմների ամրապնդմանը:

**8. Ստորագրությունը, ամսաթիվը**
**10.02.2026**